

Ա. ՏԱՐԻ - ԵՐՉՈՒՆ Բ. Վ. ԿԵԾԱՄՍԵԱԾ - 1863 - ՍԵՊՏԵՄԲԵՐ 3. - ԹԻՒ 28

ՕՐԵՓԻՒԱ

ՀԱՅ ՐԵՆԵ ԱՅՑ

Ինչ որ խմբագրութեան եւ Տնօրինութեան կը վերաբերի պէտք է ուզզել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐԹՈՒՔԱԸ ԵՐՆ, Պօլս Մէրձանը իմամ - Ալի Խան, թիւ 4. - Անդար նամակ՝ կամ ծրար կը մերժուի : Օրագիրն ամեն շաբթու հինգշաբթի օրերը կը հրատարակուի : Վեցամսեայ շրջանին դինը 20 դուրուշոց արծաթ մէտրէ ԿԱՆՈՒԽԻԿ վճարելի, ամեն թիւէ կիմսն ստորագրուիլ : - Դուրս երթալիք Օրագրաց ճամբռու ծախըը առնողին կրայ է : - Ծանուցման տողը և զուրու:

ԲԱԺԱՆԱՐԴԻԳՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՆԴՈՒԿԱՎԱՆ. Կ. ՊՈԼԻՍ Օրագրոյս գրասենեակը : - Թիֆլիզ Մեծարդոյ Ազգանդը աղա Երշեան : - Զմիւնիս Արշուրուոյ գրասենեակը : - Թէքիրսաղ. Պ. Յարութին Շամձեան : - Կէյլէ, Օթագեւզ, Ղանձըլար Պ. Խաչատուր Մանուկեան : - Տրամիզօն Պ. Խաչատուր Էլմուսեան : - Հալէպ, Պ. Յ. Ս. Գիւրըմեան. Փ.

ՄԵՃՄՈՒՄ. ԽՐԻՄԵԱՆ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ Վ. ԱՐՉՈՒԹԻՒՆ

Մէճմուա լրագիրն իւր վերջին թը լոյն մէջ երկար խորհրդածութիւն մը ընելով Խրիմեան Գ. Ե. Մէրտիչ վարդապետին. նկատմամբ ալ ամիսացիութիւն մը ըրած է, որով կուզէ ցուցնել թէ լրագրաց մէջ Խրիմեանի համար եղած գալիւստները չափազանցութիւն են. և իր այս ըսածներուն իբր ապացոյց Խրիմեանի հակառակորդներէն եկած նամակներ կը յիշէ միայն :

Մէճմուայի մեծարդոյ խմբագրէն հանդութեան օգտին ու բարւոյն անձնուեր եկեղեցականի. մը նկատմամբ ասնկ յօդուած մը բնաւ չէինք սրասէր, քանզի անոր վաեմ հանձարոյն՝ ընտիր տաղանդին՝ ողջմութեանն ու խոհականութեանը վրայ մեր անեցած համարումը մէջ եր, որով չէինք իրնար ակըն կալէր թէ ասանկ պատուական դրէշ մը ասանկ յօդուած մը վիժի և փոխանակ վաեմ ապագաներներ տարածելու ազգին մէջ ու անոր օգտին անձնուեր մէկու մը պաշտուած հանդիսանալու ինչպէս որ ու շիմէ ողջամիտ լրագրապետի մը պարտ-

քըն է, հասարակաց առջև գահավէժ դասումներով ներկայանայ :

Կը յուսանք որ Մէճմուա պատուա կան լրագրոյ. արժանայարդ. խմբագիրը Խրիմեանի անձնուրացութեան ու ջանիցը լու տեղեկանալով պիտի բարեհածի Խրիմեանի յարփն ու արժեքը ցուցնելու ջանալ. քանզի վստահութեամբ կըսենք որ Մէճմուան յամառ և տգետ զրչի մը վիժածը չէ. սակայն հոս մեր զարմանքը գրաւողը ուա երկու կէտնէ թէ քահանայական բարեկարգութեան աղգօդուած ժողովն ինչո՞ւ կը դանդաղի ջնիւթեանը Ալիկու կէտնէ թէ քահանայական բարեկարգութեան աղգօդուած ժողովն ինչո՞ւ կը դան-

դաղի ջնիւթեանը պաշտպանելու համար բոլորագիր զրկել ազգային Վարչութեան՝ ինչպէս Սէմեանը Մէջուի դէմ պաշտպանելու համար բոլոր մասուցած ազգային Վարչութեան. արդեօք Սէմեանը վարդապետ ու Խրիմեանը վարդապետ չէ, և միթէ Սէմեանը Խրիմեանէն աւելի անձնուրաց ու ազգին օգտին և բարւոյն ջանաղիր է :

Կարծենք որ մեր այս ըսածը քահանայական ժողովով թշնամանելու մտօք ըրած ըլլալուս համար, բոլոր ողջամիտ ազգայինք կը վկայեն :

Մէր նկատած մէկ կէտն ալ սա է որ՝

արդեօք Վարչութիւնը ինչու կուշացնէ
Խրիմեանի դատը, որով ուսնաց կար-
ծիքը անհիմն ենթադրութեանց և թըշ-
նամանաց վրայ կը յեղաջրվին :

Կը ինդդենք ազգային Վարչութե-
նէն, որ հասարակաց սիրելի Գեր . Խը-
րիմեան Մկրտիչ վարդապետին դէմ ե-
ղած այս անարդանաց անոր թշնամիննէ,
բուն միայն անյագ վրէժինդրութեան
արդիւնք ըլլալը պաշտօնական կերպով
ծանուցանելու բարեհաճի . որ իրաւամբ
պատիւ քերիր Վարչութեան արդարա-
սիրութեանը, եթէ այս մասին անտար-
բեր գտնուի :

ԿՐՈՆԲ . -- ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ . -- ՀԵՏՈ-
ԶՈՑՈՒԹԻՒՆ . -- ԵՒ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ
(Շաբանական-Եփեն . Տես Եփ 27)

Մարդս իր բանականութիւնը կա-
ռավարելու համար դաստիարակութիւն
պէտք է ըստիք, մենք այս կէտին վրայ
խօսելէ առաջնախ կը փափաքինք մեր
արգոյ ընթերցողաց ուշադրութիւնը ու-
րիշ կարեսը կէտի մը վրայ հրափերել,
այսինքն թէ՝ ինչ եր անցեալին մէջ ժո-
ղովուրդը առանց դաստիարակութեան .
ահաւասիկ ինդիք մը՝ որուն լուծումը մեր
ձեռնարկութեան պատասխանն է :

Ժողովուրդին սնցեալին մէջ ինչ ըլ-
լալուն վրայ ուղիղ գաղափար մը ստա-
նալու համար՝ հարկ է որ անոր ծագու-
մէն մինչեւ մեր ժամանակի պատմութեան
լաւ հմտութիւն ունենանք . այս պատ-
մութեան՝ որուն իրափանչիւր էջերը
բարբարոսութիւն՝ անգթութիւն՝ մահ՝
արիւն՝ վրովմունք՝ աւերմունք, քան
մարդասիրութիւն՝ բարեկարդութիւն՝
յառաջադիմութիւն և օգտակարութիւն
կը պարունակեն . առաջին հայեցուած-
քով պիտի սրտմունք անշուշտ, և երի-
տաստրդական եռանցուն զգացումներ-
նիս արթնուամ . սակայն երիտասարդա-
կան տաքութիւնը իրաց բուն պատճա-
ռը միտուելու անձեռնհամար ըլլալուն՝ անց-
նիք դէմ վայրկեան, մը խորհելու թէ,

ինչ եր ասոնց պատճառը :

Զգենք հոս հայեցողական ենթակ-
րութիւնները՝ որոնք ինպրոյ մը պար-
զութեան բաւական լոյս շտալէ զատ-
շատ անդամ կը շփոթին միուքերն ու
կերկարեն ինդիքը . այլ սա լաւ զիտենք
որ եղծումներն ապօրինաւորութեան
արդիւնք են . վասն զի ուր որ ապօրինա-
ւորութիւն կայ, հոն եղծումներն ան-
թիւ են . այս ըստածնուս ճշմարտութիւ-
նը կրնան իւրաքանչիւր ազգայինք ըն-
տանեկան կառավարութեանց մէջ փոր-
ձել . ուստի բնական հետևութեամբ կրր-
նանք եզրակացնել թէ՝ իրաց այս պատ-
ճառը ապօրինաւորութիւնն էր, վասն
զի չկար անատեն օրինաւորութիւն, ո-
րով չկար նաև իրաւունք և իրաւունք
ազգաց (տրուա նախինալ) . որովհետեւ
միայն հոն իրաւունք կայ, ուր որ օրի-
նաւորութիւնը կիշխէ, և ուր որ օրինա-
ւորութիւն կայ, հոն ժողովուրդին մի-
ճակը երջանիկ է . մէկ խօսքով՝ գերի չէ
հոն ժողովուրդը . վասն զի իշխանու-
թիւնը իշխանիներուն կամքը չէ, այլ օրէն-
քը՝ զօր կը զնէ ժողովուրդը իրեն հա-
մար և կը յանձնէ զայն իր ազատ կամօքը
այսինքն ընտրութեամբը՝ իշխաններու,
որոնք օրինաց գործադիրներն են միայն .

Հոս հարկ չէ ցուցնել թէ՝ ազգերն
այս օրինաւոր դրութեան մէջ չեին .
քանզի անատեն իրաւունքը զօրաւորա-
գումինն (լաւ ըէզն է ար ըլիւ ֆորս) է ըս-
կըսունքը իշխանութեան աղքիւնն էր,
որով հարկաւ իշխանը ալ աւելի իրենց
շահը (էնթէրէ) կը մասածէին, քան որ-
չափ ժողովուրդին շահն ու բարեկեցու-
թիւնը :

Ուստի այս սկզբունքը հիմ չէր կը-
նար ունենար . վասն զի, նախ որ՝ օրի-
նաւոր չէր . երկրորդ որ՝ ժողովուրդին
նկատմամբ օգտակար չէր . երրորդ որ՝
ժողովուրդին մոռաւորական զարդացմանը
չկրնալ նպաստելէն զատ՝ ժողովուրդին
կոյր մնալը այն ժամանակի բաղաքակա-
նութեան նպաստաւոր էր, ուստի և

ԷԼՏ . Բայց թողութիւն կընես . . .
չեմ կրնար հաճութիւն տալ :

ԷՕՃ . Ինչո՞ւ համար :

ԷԼՏ . Եթէ հայրս զիս աս տեղերէն
հեռացնել կ'ուզէ թող ինք գայ , եւ ա-
նոր հրամանացը յարդութեամբ կը հր-
նազանդիմ , բայց ուրիշին կամքին բոլոր
զօրութեամբ դէմկ'զնեմ :

ԷՕՃ . Ի՞նչ կըսես . . . կուզես ո՞լ . . .

ԷԼՏ . Ես միայն հօրս ձայնին կը հր-
նազանդիմ կիմանաս :

ԷՕՃ . Խլոէկոնտա իմ՝ խորհուրդիս
անսա , զիս բռնութիւն բանեցնելու մի
ստիպեր :

ԷԼՏ . Բանութիւն . . . ինձի բռնու-
թիւն . . . վերջապէս ի՞նչ ըլլալը յայտ-
նեցիր : Անհաշտ թշնամի , բոլոր թշուա-
ռութիւններուս պատճառ , ի՞նչ նոր մե-
քենաներ արդեօք ինձի լարած ես . գո-
ցէ ալ մահուանս որոդայիմներ պատ-
րաստած ես : Բայց չէ , կամքդ պիստի
չկատարուի : Վասուած զիս միմիթարեց
զիս պաշտպանեց : Քու անագորոյն հր-
նարքներէդ աղատ եմ : Ինձի համար այ-
սու ճետեւ գուարճութիւն , ուրախու-
թիւն . քեզի համար յուսահատութեան
կատաղութիւնը , եւ անկարող բարյու-
թիւն մը : Գնա՞ . . . աչքիս առջեւէն հե-
ռացիր , քու զզուելի դէմքէդ կը գար-
շիմ . . . :

ԷՕՃ . Չսմաս կին , բարկութեանս
արդիւնքը հիմա պիտի տեսնես : Ազէ ,
ֆրանչեսդո , պահապաններուդ հրաման
տուր որ այս թշուառականը բունի գուրա
հանեն ; թող այս դոնէն քաշկուտելով
տանին :

ՖՐԱՆ . Պարո՞ն , ի՞նչ կըսես :

ԷՕՃ . Ի՞նչ կըսեմ . . . քեզի կըսեմ,
շուտովի . . . :

Շաբանակէց :

Ժանորդներէն երկու շաբաթէ . ՚ի վեր
թերթերնիս չըրատարակուելուն հա-
մար , և կը խնդրենք յատկապէս այն ա-
մեն անոնցմէ , որ մինչև հիմա լրագիր
առած՝ բայց ստակ հատուցած չեն , բա-
րեհաճին իրենց բաժանորդագինը հա-
տուցանել :

ԴՊՐՈՑ ԵՒ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

ՎԻԵՆԱՑԻ ՄԻՒԹԱՐԵՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՅ

Ի ԹՐԻԵՍ

Այս դպրոցը , որ հոկտեմբերի սկիզ-
բը (ըստ նոր տումարի) իր երրորդ տա-
րին կը ոկոնի , երկու գլխաւոր մասերու
կը բաժնուի . վաճառականութեան
դպրոց ու վարժարան :

Այսնց վրայ մանրաման տեղեկու-
թիւնը , դպրոցի յայտագրոյն . մէջ կը
տեսնուի : Յայտագիրը՝ Պ . Յարութիւն
Մարդարեանին գրայտաճառութեան սեն-
եակին մէջ եւ Զեփիւռի գրանենեակը
ձրի կը տրուի ; ընդարձակ տէղեկութիւն
ուզողը կրնայ ստանալ ամէն երեքշաբ-
թի ու շաբաթի օրը Ալիէննայի վաճարին
գրասունը եղող վարդապետէն :

Ալիէննայի վաճարին գրասունն է Բէ-
րա Մէքթէպ սօդաղը թիւ 8 :

Պատշաճ կը համարինք միանգամայն
ծանուցանելու որ թրիեստի դպրոցին
վարդապետներէն մէկը աս պարապոյ
օրերը Ա . Պոլիս կը գտնուի , եւ ըստ
նոր տումարի ուրաքանչերի վերջը ճամ-
բայ պիտի ենէ ու տղաքը մէկտեղ տանին :

ԽՄԲԱ.ԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՆԱԾ Մ. ՀԱՅԿ ԳԱՓԱՄՄԱՅԵԱՅ

ԵՒ

ՏՆՈՐԵՆՈՒԹԵԱՄԲ

Պ. ԲՈՐԹՈՒԹՅՈՒՆԵԱՅ

Կ. ՊՕՅ ԻՄԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ

Ա. ՀԱՅԱԶԳԱՅԻՆ - ՏՊԱՐԱՆ